Արձանագրություն 02

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-42/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի 12 մայիսի, 2026թ., ժ 17:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

Հանձնաժողովի նախագահ՝

1) Հովսեփ Սիմոնյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

4) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-42/26» ծածկագրով գնանշման հարցման գնումների միջոցով առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 21.04.2026թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար «Գյումրի համայնքի Հաղթանակի պուրակի վերանորոգման, բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների» ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-42/26» ծածկագրով գնանշման հարցման գնումների համաձայն գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Անվանումը	Հասցե
1.	«Միկպրո» ՍՊԸ	ք. Գյումրրի, Հաղթանակի պողոտա 64
2.	«Էլեկշին» ՍՊԸ	ք. Վանաձոր, Ավետիսյան փ, 9-1
3.	«Աքարա» ՍՊԸ	ք. Գյումրրի, Ծուլուկիձե 5

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը կազմվել և ուղարկվել են հրավերի պահանջներին համապատասխան:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող հավելվածները:

1.6. Մասնակիցների առաջարկած գները

Հ/Հ	Ապրանքի անվանում	«Միկպրո» ՍՊԸ		«Էլեկշին» ՍՊԸ		«Աքարա» ՍՊԸ		Նախահաշվային գին
		Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ	Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ	Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ	Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն	ներառյալ ԱԱՀ-ն
1.	Գյումրի համայնքի Հաղթանակի պուրակի վերանորոգման, բարեկարգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ	4 550 000	4 550 000	5 332 000	5 332 000	6 000 000	6 000 000	7 000 000

Ըստ հրավերի պահանջների մասնակիցները հայտով ներկայացնելու էին՝

Չափա-բաժին	Փորձառությանը ներկայացվող պայմանները	Պահանջվող փաստաթղթերը և դրանց ներկայացվող պայմանները	Նմանատիպու-թյունը
1	Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի գնման հայտով սահմանված գնից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի գնման հայտով սահմանված գնի հիսուն տոկոսից:	Պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիր կամ պայմանագրեր (պայմանագրերի, համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթուղթի՝ ակտի, արձանագրության, հաշիվ ապրանքագրի պատճենները կամ սկանավորված տարբերակները)	*Պուրակների,այգիների, բակերի, նմանատիպ տարածքների վերանորոգման, բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում*

➢ **«Աքարա» ՍՊԸ-ի** ներկայացրած հայտում բացակայում է Աշխատակազմում ներգրավված անձնակազմի ամբողջական փաթեթը, այն է ՝

N	Մասնագետների		
Չափա-բաժիններ	որակավորումը	Աշխատանքային փորձը	
		Ժամանակա-հատվածը	Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը
1.	Աշխատակազմում ներգրավված անձնակազմը պետք է ունենա հետևյալ արտոնագրերը՝ ● ճարտարապետ /բարձրագույն Ա դաս/-1 անձ ● ճարտարագետ կոնստրուկտոր /առաջին դաս ենթադաս Ա1/-1 անձ ● լիցենզիայի ներդիր՝ էլեկտրամատակարարում -1 անձ ● լիցենզիայի ներդիր ջրամատակարարում և ջրահեռացում- 1 անձ ● համապատասխան փորձառու մասնագետներ վերը նշված առաջադրանքները կատարելու համար:	Աշխատան-քային փորձ առնվազն 3-5 տարի	նմանատիպ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման պայմանագիր:

Ինչպես նաև բացակայում է պահանջվող լիցենզիաները, ներդիրները, արտոնագրերը:

➢ **«Միկպրո» ՍՊԸ-ի** հայտում նմանատիպ պայմանագրերը գումարային արտահայտությամբ պակաս են գնման գնից՝ 7 000 000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամից, ինչպես նաև մեկ պայմանագրի շրջանակում ամենամեծ պայմանագիրը պակաս է գնման գնի հիսուն տոկոսից: Անհրաժեշտ է 1 աշխատանքային օրվա ընթացքում առկայության պարագայում ներկայացնել հավելյալ պայմանագրեր:

Հանձնաժողովը որոշեց՝

«Աքարա» և «Միկպրո» ՍՊԸ-ներին ծանուցել՝ հրավերի նկատմամբ անհամապասխանությունները շտկելու վերաբերյալ: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 41-րդ կետի համաձայն անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ուստի անհրաժեշտ է 1 աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան փոփոխությունները:

Շտկման ենթակա փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2026 թվականի մայիսի 13-ը, ժամը 23:59:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա 2026 թվականի մայիսի 14-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Հովսեփ Սիմոնյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝ ---------- Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

---------- Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)

---------- Վարդան Զարիֆյան (ԳՊ/ԲԱ)

---------- Հրաչիկ Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ---------- Արմինե Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)